ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԵՎԱԴԱ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
52	ԼԵՎԱԴԱ ՍՊԸ	ԼԵՎԱԴԱ ՍՊԸ	ԼԵՎԱԴԱ ՍՊԸ	Զրահաբաճկոն Ա տեսակի, սև: Զրահաբաճկոնը առանց բալիստիկ վահանների է, բաղկացուցիչ հիմնական մասերն են՝ զրահակիրը և զրահակրին ամրացվող տակտիկական գոտին: Զրահակիրը կազմված է դիմային, թիկունքային և երկու կողային հատվածներից: ՈՒնի 4 կետով արագ անջատման, արձակման համակարգեր և արտաքինից պատյանների ամրացման (մոլլե) համակարգեր: Դիմային և թիկունքային մասերը ուսերի վրա միմյանց ամրանում են չափսի փոփոխման հնարավորություն ունեցող կախաններով , որոնք դիմացից ունեն արագ անջատման համակարգեր: Մարտաբաճկոնը բոլոր հատվածներում ՝ դիմային, թիկունքային, կողային, ունի արտակարված մոլլե համակարգի ամրագոտիներ: Արտաքին մակերեսների վրա պատրաստված են 5-6 շարք 25մմ լայնությամբ

				ՄՈԼԼԵ ժապավեններ: Ուսագոտիները պատրաստված են 40մմ լայնությամբ ժապավենից՝ երկարության կարգավորումը կպչուն ժապավենների և արգելակիչ ճարմանդի միջոցով, ամրանում են առջևի մեկուսամասին արագ արձակման ճարմանդներով: Ուսաբարձիկները սպունգային ներդիրով, 12ից 14սմ հաստությամբ, 8սմ լայնությամբ, 15սմ երկարությամբ փոքր չափերի համար կամ 9սմ լայնությամբ, 25սմ երկարությամբ մեծ չափերի համար՝ թիկունքային մեկուսամասին և ուսագոտիներին ամրանալու հնարավորությամբ: Դիմային և թիկունքային հատվածները բազմաշերտ են, ունեն սպունգային բարձիկներ, ցանցային օդափոխման շերտեր, ինքնակպչուն ժապավեններով հատվածներ, ներսի մասում ունեն զրահե վահանների տեղադրման համար նախատեսված գրպաններ, որոնք կոճկվում են (ամրանում են) նվազագույնը 4 սմ լայնքով, բարձր որակի ինքնակպչուններով: Կարերը ամուր են, ամրակարերը զիգզագաձև: Պատրաստված է 1000 դեն նեյլոնե և/կամ 100% պոլիէսթեր նյութերից, նեյլոնե ժապավենից և պարաններից, հիմնական կարի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1400 N , ներքին կարերի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1000 N : ՈՒնի գոտկատեղերի արագ ամրացման-արձակման պոլիմերային ճարմանդներ՝ նեյլոնե կախաններով, որոնք ամուր են, թույլ ճկվող, դժվար կոտրվող: Մարտաբաճկոնի քաշը՝ առանց ամրացվող պատյանների 3,2-3,6 կգ, դիմային և հետին վահանիկների լայնքը՝ 32-34սմ, բարձրությունը՝ 38-42

				սմ: Դիմային և կողային հատվածները ունեն 7-9 հատ AK-74 ինքնաձիգի պահեստատուփերի համար նախատեսված գրպանիկներ, որոնցից 3-4 հատը՝ դիմային մասում, ունեն պահեստատուփերի ամուր ֆիքսման համակարգեր: Մարտաբաճկոնին կարված են դիմային և թիկունքային 2 հատ ինքնակպչուն ժապավեններ, որոնց ամրացված է ասեղնագործված կամ պոլուռետանային 6սմ* 10սմ չափսի տարբերանշաններ (գույները, ձևը, չափսերը և գրվածքները Մատակարարին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո՝ անմիջապես): Տակտիկական գոտին երկշերտ է, կազմված է ներքին՝ ինքնակպչունով վրակարված ազատ ծայրերով գոտիից և արտաքին գոտիից , որի ծայրերին մետաղական կամ ամուր պլաստմասայե ճարմանդներ են, գոտու չափսի կարգավորման հնարավորությամբ: Արտաքին գոտու երեսին ամրակարված է երկշերտ մոլլէ (տակտիկական ամրացման) համակարգ: Զրահաբաճկոնի արտաքին տեսքը, ձևը, ձևվածքը ըստ Պատվիրատույի կողմից ներկայացվող նմուշի: Փաթեթավորումը և պիտակավորումը գործարանային, ստվարաթղթե արկղերով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЛЕВАДА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏվ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
52				